Ստեփան Զորյան

Հոգաբարձուն

I

Ուսուցչի նամակը հոգաբարձուին

Հարգելի պ. Աղաբեկյան,

Խնդրում եմ բարեհաճեք ռոճիկի մասին կարգադրություն անել, որովհետև խիստ կարիքի մեջ ենք: Խնդրում եմ նաև վառարանը շինել տաք, որովհետև ծուխն առաջվա նման շարունակ ետ է տալիս, և դասարանների լուսամուտների ապակիները գցեք, որովհետև երեխաները մրսում են, այնպես որ հետո հիվանդություններ կարող են պատահել:

Հարգանքով՝

Ավագ-ուսուցիչ Մամիկոն Ավալյան:

II

Հոգաբարձուի պատասխանը

Պարոն Մամիկոն,

Երեկ ստացա ձեր նամակը և կարդացի: Գրում եք, թե կարիք ունեք և ռոճիկ եք խնդրում: Ոչինչ չունեմ: Ռոճիկ տալը, իհարկե, մեր պարտքն է, կտանք, բայց

բանն էն է, որ երեսփոխ Մինասը գնացել է քաղաք բուժվելու: Ասում են՝ աղիքների հիվանդություն ունի: Եթե աստծով մի բան չպատահի, էս երկու օրը շատ կարելի է գա, էն ժամանակ ամեն բան կանենք:

Ով գիտի տան համար բանե՞ր են հարկավոր, որ ասում եք կարիք ունեք:

Եթե, դրուստ որ, տան համար բաներ պետք են, կարող եք իմ խանութից վերցնել, հետո կհաշվենք, ոչի՛նչ: Երկար ժամանակ է, պարոն Մամիկոն, որ էլ խանութ չեք գալի... Ինչպես երևում է՝ նեղացել եք: Բայց հավատացեք, պարոն Մամիկոն, բրինձը հենց այդպես էլ ստացել էինք: Եթե իմանայի մեջը կեղտ կա, ձեզ կտայի՞, հարցնում եմ... Իհարկե չէ: Որ լավ ապրանքը ձեզ նման պատվական մարդուն չտամ, բա էլ ո՞ւմ պետք է տամ, մեր ղալմուխի՞ն (ամբոխին)... Մի խոսքով...

Հիմի նոր բրինձ ենք ստացել. եթե ուզում եք, համեցեք տարեք: Ագալու լավ տեսակի բրինձ է: Անցյալ օրը տերտերը մի փաթ տարավ: Նա շատ էր հավանում: Եթե դուք էլ տեսնեք, դուք էլ կհավանեք: Բրինձից սավայի՝ ստացել ենք Օրդուբադու չիր, Բաղդադի խուրմա և Երևանի թուզ: Համեցեք, գներն էլ շատ էժան են:

Հետո գրում եք, թե դասարանների լուսամուտները կոտրված են... Էդ հո անցյալ անգամ էլ գրել էիք: Մի՞թե շուշա գցողը դեռ չի եկել գցել... Էն անպիտանին տասն անգամ ասել եմ, որ գա, և զարմանում եմ, թե ինչո՛ւ չի գալիս... Ով գիտի անցյալ տարվա հաշիվը չի ստացել, դրա համար է նազ անում: Ոչինչ. ես նրան կասեմ. հալբաթ կգա խանութ... Եթե, ոնց որ ասում եք, պարոն Մամիկոն, դասարաններում շատ ցուրտ է, առայժմ բաց տեղերը յուղած թուղթ կպցրեք, հետո կտեսնենք: Յուղած թուղթը լավ է, հա՛մ լիս կլինի, հա՛մ էլ քամի չի փչի:

Իսկ ինչ վերաբերում է վառարանին, որ ասում եք, թե լավ չի վառվում և միշտ ծուխը ետ է տալիս, էդ նրանից կարող է լինել, որ բուխարիկի մեջ շատ մուր կիտված կլինի: Դասից ետը, աշակերտներից մեկին բարձրացրեք կտուրը թող թոկով կապած մի քար, կամ փետի ծերը մի ավել կապի, կախ անի բուխարիկի մեջ ու մուրը մաքրի: Դրանից ետը, եթե ծուխը էլի ետ տա, նշանակում է բուխարիկի մեջ մի ուրիշ բան կա. կամ քար ընկած կլինի կամ սատկած կատու:

Հերու էլ էդպես մի բան էր պատահել: Վառարանի ծուխը միշտ ետ էր տալիս: Հերվա ավագ ուսուցիչ պարոն Տիգրանն էլ ձեզ նման շարունակ գանգատվում էր, թե՝ «Դասարանները ծխով լցվում են, չենք կարող պարապել, ֆլան-ֆստան, շինեցինք»: Ինչ արինք-չարինք ծուխը չէր կտրում: Վերջը, բանից դուրս եկավ, որ սատկած կատու էր ընկել բուխարիկի մեջ: Հիմի էլ, ո՞վ գիտի, Էդպես մի բան է պատահել: Դուք ասածս փորձեցեք, նրանից ետը կտեսնենք:

Հետո նամակում գրում եք, թե երեխաները մրսում են դպրոցում:

Ես կարծում եմ, նրանք ոչ թե դպրոցում են մրսում, այլ հենց դրսևը: Եթե դուք չթողնեք, որ նրանք դուրսը այնքան խաղան, լրբություններ անեն, դժվար թե մրսեն: Եթե դպրոցում մրսում են, ձեզ եմ հարցնում, էլ դրսևը ինչի՞ են խաղում. չէ՞ որ դուրսը ներսից ավելի ցուրտ է: Նշանակում է նրանց մրսելու պատճառը կոտրած ապակիները չեն:

Էս էլ պետք է ասեմ ձեզ, պարոն Մամիկոն, որ ձեր աշակերտները իրենց շատ անկարգ են պահում դուրսը:

Պատահում է անցնում եմ փողոցով, տեսնում եմ ձեր աշակերտները դասները թողած, պարապ-սարապ մի տեղ հավաքված կա՛մ չանա են խփում, կա՛մ հռհռում, կա՛մ թե չէ ձնթոփ խաղում: Էն օրն էլ ձնթոփի մեկը եկել դիպել էր մեր հարսի (այսինքն՝ իմ նշանածի) գլխին: Էդ դեռ ոչինչ: Մի պատահմունք է: Համա բանն էս է, երբ էդպես խաղերի ժամանակ անցնում եմ կողքներից, չեն էլ ասում, թե ո՛վ է անցնողը... Մի խոսքով... Ամեն անգամ եկեղեցի գնալիս՝ նկատում եմ, որ ձեր աշակերտները մարդու ըսկի մարդատեղ չեն դնում: Ի՞նչ որ է:

Եկեղեցի ասի, միտս եկավ, պարոն Մամիկոն: Գիտեք ինչ: Էս քանի օր է տիրացու Խաչատուրը պատից վեր ընկնելու պատճառով հիվանդացել է, իսկ երեսփոխն էլ, ոնց որ ասի, գնացել է քաղաք բուժվելու, էնպես որ խեղճ քահանան՝ իր ծեր հալով մնացել է մենակ և իրար չի գցում. չգիտի դասո՞ւմ երգի, թե՞ փոխ ասի: Մեր հարսը, այսինքն՝ իմ նշանածը, ասում է, թե խեղճ քահանան, երբ դասումն է երգում, փոխն է մն՛ում, իսկ երբ փոխն է ասում, դասի խոսքերն են մնում: Հիմի, էնպես որ, պարոն Մամիկոն, լավ կանեք, եթե կարող եք դուք, կամ ուսուցիչներից մեկը, գաք քահանային օգնելու, հետը փոխ ասեք. թե

չէ՝ խեղճը մեղք է: Պարապ լինեի, ես ինքս կերթայի, բայց արի տես, որ թարսի պես, խառնված եմ. նոր ստացված ապրանքները տեղավորում եմ: Պարոն Սմբատի ձենը լավ է. լավ կանեք, հենց նրան ղրկեք:

Մի բան պետք է ասեմ պարոն Սմբատի մասին, որ իրան էլ հայտնեք, թե էդպես չի կարելի, ամոթ է: Գիտեք ինչ. էն օրը՝ գիշերով մեր հարսի հետ անցնում եմ Վերի թաղի փողոցով, տեսնեմ մինը երգ է ասում: Ոտս կախ արի, ասի՝ տեսնենք էս ո՞վ է, որ էս գիշերին էսպես էրված երգ է ասում: Բանից դուրս եկավ, որ երգողը պարոն Սմբատն էր:

Գիտեք, դա մի քիչ լավ չէ, պարոն Մամիկոն: Լսողները վատ բաներ կկարծեն. հենց կիմանան, թե պարոն Սմբատը սիրահարված է, որ այդպես երգ է ասում մեջ գիշերին:

Ուսուցիչ մարդը պետք է մի քիչ իրեն պահի, որ չասեն թե՝ էսպես է, էնպես:

Օրինակի համար, պարոն Գարեգինը, օրիորդ Անահիտը, երբ իրար հետ անցնում են փողոցով, միշտ խոսում են ու ծիծաղում...

Դա լավ չէ, պարոն Մամիկոն, ըսկի լավ չէ: Տեսնողները կկարծեն, թե սրանցում մի ինչ-որ բան կա, որ էդպես փսփսում են ու ծիծաղում:

Պ. Գարեգինը, փառք աստծու, աստված իրեն բաշխի, իրա համար կնիկ ունի. նրա հետ ինչքան ուզում է ման գա... Օչով էլ բան չի ասի, բայց... օրինակի համար, ես կնկա տեր մարդ եմ. եթե վեր կենամ ու մի ուրիշ կնկա հետ ման գամ, ի՞նչ կասեն... Չե՞ն ասի թե՝ «Տեսեք, տեսեք անամոթին, ի՞նչ բան ու գործի է. իրա պսակովի կնիկը թողած, ուրիշի հետ է ման գալի»... Կասե՛ն ու հլա հետն էլ կթքեն: Հապա՛... Էդպես պարոն Գարեգինին մի քիչ զգուշացրեք, որ խալխը նրա մասին վատ բան չխոսեն: Մեր հարսը էն օրն ինձ մի քանի բան պատմեց, համա հավատալս չի գալի... Ինչ ո՛ր է: Եղածը ասում եմ ձեզ. հիմի դուք գիտեք:

Իսկ ռոճիկի մասին, ոնց որ ասի, երբ երեսփոխը, եթե աստծով մի բան չպատահի, քաղաքիկ գա, կտեսնենք:

Նորաշենի ծխական դպրոցի հոգաբարձու և տանուտերի օգնական՝

Աբաթեկ Աղաբեկյան:

Հա՛, պարոն Մամիկոն, մոռացա ասել, որ բրինձից, չրից ու խուրմից սավայի՝ ստացել ենք լավ գեյթուն, Թավրիզի քիշմիշ և թազա լիմոն:

Դուք լիմոն, կարծեմ, շատ եք սիրում...

1915